

ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԴԵՐՆ ՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՆ ԸՍՏ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ Բ.- ՔԱՅՆՈՒՔ

ԳԱԳԻԿ ԴԱՆԻԷԼԵԱՆ (gagidaniel@gmail.com)

Սոյն յօդուածաշարի առաջին հրապարակումը¹ նուիրուած էր Կիլիկեան Հայաստանի մի ծովափնեայ նաւահանգստային բերդի, որը լատին աղբիւրներում յիշատակուած է Կանամելլա (Canamella) կամ Կարամելլա (Caramella, Caramela) անուանումներով, իսկ արաբական աղբիւրներում յայտնի է *ալթինի* (al-Tinī) կամ *Հիսն ալթինաթ* (Hīṣn al-Tināt / Tināt) անուններով: Ինչ վերաբերում է հայալեզու աղբիւրներին, ապա նրանցում յիշեալ ամրոցի մասին առհասարակ տեղեկութիւններ չեն պահպանուել: Այս հրապարակումը նման է նախորդին նրանով, որ ներկայ հետազոտութեան թեմա ընտրուած «Քայնութ» բերդի մասին նոյնպէս հայալեզու սկզբնաղբիւրներում յիշատակութիւններ չկան՝ մասնաւորապէս այն ժամանակաշրջանի համար, երբ բերդը Կիլիկեան Հայաստանի տարածքի մաս է կազմել: Տուեալ պարագայում տեղեկութեան միակ աղբիւրը օտարալեզու՝ մասնաւորապէս արաբական պատմագրութեան յուշարձաններն են:

«Քայնութ»ը բերդի աւելի ուշ շրջանի անուանումն է, այդ թում երբ գտնուել է Կիլիկիոյ հայոց թագաւորութեան վերահսկողութեան ներքոյ: Մինչդեռ արաբ-բիզանդական հակամարտութեան շրջանում՝ Է.-ԺԱ. դարերում, այն արաբներին յայտնի էր Հիսն ալՀադաս (Hīṣn al-Ḥadaṣ), կամ աւելի ճիշտ՝ ալՀադաս ալՀամրա (al-Ḥadaṣ al-ḥamrā'), իսկ յոյներին՝ Adata (Ἀδατα) անուանումներով:

Ինչպէս որ ալթինին, ալՀադասը նոյնպէս մօտ չորս դար շարունակ եղել է արաբ-բիզանդական սահմանային գօտու՝ *Ἰσχυρῆ* կարեւորագոյն ամրութիւններից ('*awās'im*) մէկը՝ մշտապէս կռուախնձոր լինելով երկու կողմերի համար²: Այն պատկանում էր ալՋազիրայի (Հիախսային Միջա-

¹ Տե՛ս՝ Գ. Դանիէլեան, «Կիլիկեան Հայաստանի բերդերն ու քաղաքներն ըստ մոտովմանական աղբիւրների, Ա. ալթինի», *Journal of the Society for Armenian Studies (JSAS)*, 2021:27(2), էջ 151-82:

² ԱլՀադասի պատմութեան վերաբերեալ համառօտ յօդուածներ կան *Իսլամի հանրագիտարանի* առաջին եւ երկրորդ հրատարակութիւններում (*The Encyclopaedia of Islam. A Dictionary of Geography, Ethnography and Biography of Muhammadan Peoples*, E.J. Brill, Լէյտէն, 1927 (վերատպ. 1993), էջ 187 եւ S. Ory, "Al-Hadath", *The Encyclopaedia of Islam (EI)*, vol. III, (New Edition) E.J. Brill, Լէյտէն, 1991, էջ 19-20: Բերդի պատմութեան յատկապէս վաղ շրջանի աղբիւրներն իր աշխատութեան մէջ լրագոյնս մատնանշել է Գ. Լը Սթրենջը (G. Le Strange, *Palestine under the Muslims. A Description of Syria and the Holy Land from A.D. 650 to 1500*, Alexander P. Watt, Լոնտոն, 1890, էջ 443-44 եւ նոյնի՝ *The Lands of the*

գետքի) բերդաշարքին: Բերդի աշխարհագրական դիրքը ռազմավարական մեծ կարեւորութիւն էր ապահովում նրա համար: Այն գտնուում էր Լեռնային Կիլիկիայի սահմանագլխին՝ Տաւրոսեան լեռների ստորոտին՝ Մալաթիայի եւ Մարաշի միջեւ, եւ հսկում էր Ալքիստան տանող լեռնանցքը (Darb al-Hadai): Այս առումով այն կարեւորագոյն յենակէտ էր արաբների համար Բիզանդական Կայսրութեան փոքրասիական տարածքներ ներխուժելու եւ ընդհակառակը՝ իսլամական հողերը բիզանդական արշաւանքներից պաշտպանելու համար: Թուրքիայի արեւելեան շրջանների պատմաճարտարապետական ուսումնասիրութեանը նուիրուած իր հիմնարար աշխատութեան մէջ Թ. Սինկլէրը գրում է, որ Ը.-Ժ. դդ. ալՀադասի հիմնական գործառոյթը Բիզանդական Կայսրութեան սահմանագծից ոչ հեռու զօրքերի կենտրոնացումն ապահովելն էր Հարունիյայից (Կիլիկեան դաշտավայրի արեւելեան եզրից) Մալաթիա տանող ճանապարհի երկայնքով: Ըստ նրա, բերդն աւելի մեծ կարեւորութիւն է ձեռք բերել Ժ. դարի սկզբներին, երբ Էլբիստանի դաշտավայրը նուաճել են բիզանդացիները³:

ԱլՀադասը նաեւ քրիստոնէական բնակչութիւն է ունեցել: Միքայէլ Ասորու վկայութեամբ՝ Ը.-Թ. դդ. ալՀադասում նաեւ ասորական արեւելեան ուղղափառ եկեղեցու եպիսկոպոսական աթոռ է եղել: Իր ասորերէն ժամանակագրութեան յաւելումով նա յիշատակում է Թ.-Ժ. դդ. ասորի Յակոբիկ պատրիարքների կողմից ձեռնադրուած 13 թեմակալ առաջնորդի անուն, եւս մէկին յիշում է որպէս «Հադասի եւ Ռաբանի» եպիսկոպոս⁴:

Eastern Caliphate (Mesopotamia, Persia, and Central Asia from the Moslem conquest to the time of Timur), Cambridge University Press, Քեմպրիճ, 1905, էջ 121-22. նաեւ՝ F. Hild, Das Byzantinische Strassensystem in Kappadokien (Tabula Imperii Byzantini, Band 2), Österreichische Akademie der Wissenschaften, Վիեննա, 1977, էջ 138-40. նաեւ՝ W.M. Ramsay, The Historical Geography of Asia Minor, Լոնտոն, 1890, էջ 301. նաեւ՝ Ղ. Ալիշան, Սիսուան (համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ), Վենետիկ, Ս. Ղազար, 1885, էջ 428. նաեւ՝ Բ. Կիլէսէրեան, Ծովք-Տլուք եւ Հոռմ-Կլայ (պատմական եւ տեղագրական ուսումնասիրութիւն), Մխիթարեան տպարան, Վիեննա, 1904, էջ 111-15 (սխալմամբ ալՀադասը նոյնացնում է Այնթաքի հետ). նաեւ՝ Գ. Սարաֆեան, Պատմութիւն Անթէպի հայոց, հղր. Բ., Լոս Անճելըս, 1953, էջ 216. նաեւ՝ Հ.Թ. Նալբանդեան, Արաբական աղբիւրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին. Եակոպ ալՀամաուի, Աբու-Ֆիդա, Իբն Շադդադ, Երեւան, 1965, էջ 155. նաեւ՝ Թ. Յակոբեան, Սո. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հղր. 3, Երեւան, 1991, էջ 300. նաեւ՝ T.A. Sinclair, Eastern Turkey: An Architectural and Archaeological Survey, vol. IV, Pindar Press, Լոնտոն, 1990, էջ 77-79:

³ Sinclair, էջ 77:

⁴ *Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche, 1166-1199, t. III, éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, E. Leroux, Փարիզ, 1905, էջ 451-82 (փնտռել ըստ Hadet տեղանուն) եւ 499 (ցանկ եպիսկո-*

Ատորբու միջնադարեան սկզբնադրիւններում բերդամրոցին վերաբերող տեղագրական վկայութիւնները եւ պատմութիւնը :

ԱլՀադասի մասին առաջին վկայութիւններն մուսուլմանական պատմաաշխարհագրական գրականութեան մէջ վերաբերում են Է. դարին: ԱլԲալազուրին (մահ. 892) իր բերդի մասին գրում է.

Հիսն ալՀադասը գրաւուել է Օմարի⁵ օրօք: Այն գրաւել է Հաբիբ իբն Մասլամայի [իրամանատարներից] Իյադ Իբն Ղանմի⁶ կողմից: Դրանից յետոյ Մուսլիման⁷ վստահում էր նրան: Օմայեանները Հադասի լեռնանցքն անուանում էին ալՍալամա (իմա՝ անվտանգութիւն, ապահովութիւն)՝ որպէս վատ նախանշանակ, քանզի բազմաթիւ մուսուլմաններ էին այնտեղ գերութեան մէջ ընկնում: Սա միակ դիպումն էր (կամ իրադարձութիւնը) է, ինչ որոշ մարդիկ պատմում են նրա մասին⁸: Մի մասն էլ ասում է, թէ մուսուլմաններն այնտեղ մի դեռահասակ պատանու (բնագրում՝ *gūlām ḥadaṭ*) են հանդիպել, ով իր զինընկերների հետ կռուել է իրենց դէմ, եւ այդպէս «դեռահաս [պատանու] կիրճ» է կոչուել⁹:

պոսների). նաեւ՝ J. M. Fiey, *Pour un Oriens Christianus Novus: Répertoire des Diocèses Syriacques Orientaux et Occidentaux* (ին Kommission Bei Franz Steiner Verlag), Շտուտգարտ-Պէյրուօ, 1993, էջ 203-04: Միքայէլ Ասորու ժամանակագրութեան մէջ ալՀադասի վերաբերեալ յիշատակութիւնները պէտք է տարբերակել *ալՀադիսայի* (արաբ.՝ *Al-Hadīṣa* կամ *Hadīṣat al-Mawṣil*) յիշատակումներից, որը քաղաք էր Տիգրիսի արեւելեան ափին: Այն նեստորական եպիսկոպոսների աթոռանիստ էր: Աւերուել է ԺԳ. դարում մոնղոլների կողմից (E. Herzfeld, “*Hadīṣat al-Mawṣil*”, *EP*, էջ 29): Այս ալՀադասը չպէտք է շփոթել նաեւ Լիբանանի տարածքում՝ Տրիպոլիից ոչ հեռու եղած նոյնանոյն բնակավայրի հետ: Օրինակ, այս սխալ ճանապարհով է գնացել Լը Սթրենջը, երբ ալԴիմաշկիի՝ լիբանանեան ալՀադասին վերաբերող հաղորդումը վերագրել է *Tuḡūrī* ալՀադասին եւ թարգմանաբար ներկայացրել (Al-Dimašqī, *Nuḥbat al-dahr fī ‘aḡḡ’ib al-barr wa-l-bahr (Cosmographie de Chems-ed-Din Abou Abdallah Mohammed ed-Dimichqui*, ed. M.A.F. Mehren, U. Փեթերսպուրկ, 1866), էջ 208. նաեւ՝ Le Strange, *Palestine*, էջ 444: Մի տեղ էլ սխալուել է Լիւդա Նորթրափը, երբ Իբն ալՖուրայի երկում յիշատակուած վերոբերեալ ալՀադասը կրկին նոյնացրել է *ալՀադաս-Քայնուքի* հետ (L.S. Northrup, *From slave to sultan: The career of al-Manṣūr Qalāwūn and the consolidation of Mamluk rule in Egypt and Syria (678- 689 A. H./1279-1290 A.D.)*, Franz Steiner Verlag, Շտուտգարտ, 1998, էջ 199, ծնթ. 288):

⁵ Ուղղափառ իսլամի չորս բարեպաշտ խալիֆաներից երկրորդը (իշխ. 634-44):

⁶ Յայտնի արաբ զորահրամանատար (մահ. 641), որի գլխավորութեամբ իսլամական բանակները նուաճել են Հիւսիսային Միջագետքի ու Հիւսիսային Ասորիքի մի զգալի մասը:

⁷ Օմայեան խալիֆայութեան հիմնադիր Մուսլիմ իբն Աբի Սուֆիանն է (իշխ. 661-80):

⁸ Պատմիչը փորձում է բացատրել բերդի *al-Hadaṭ* անուանման ծագումը:

⁹ Al-Balāḍurī, *Futūḥ buldān*, bi-tahqīq ‘Abd Allāh Anīs al-Ṭabbā‘ wa- ‘Umar Anīs al-Ṭabbā‘, Պէյրուօ, 1987, էջ 267 եւ հմմտ.՝ *Արաբ մայրենագիրներ. Թ.-Ժ. դարեր*, ներած. եւ բնագ. թարգ.՝ Ս. Տէրղետնդեան, ԵՊՀ հրատ., Երեւան, 2005, էջ 240-41. նաեւ՝ Qudāma ibn Ḡa‘ar, *Kitāb al-ḥarāḡ wa-ṣinā‘at al-kitāba*, bi-tahqīq

Պատմիչը շարունակում է, որ Մրուան իբն Մուհամմադ խալիֆայի¹⁰ դէմ բռնկուած ապստամբութեան ժամանակ հռոմէները (իմա՝ բիւզանդացիները), օգտուելով յարմար առիթից, գրաւել են ալՀադասը՝ դուրս քշելով բնակիչներին, ինչպէս որ Մալաթիայի հետ էին վարուել:

[Հիջրայի] 161 թուականին (777/778), Միքայէլը¹¹ յարձակուեց Մարաշի Ամլի կողմը, եւ ալՄահդին¹² նրան հանդիման ուղարկեց ալՀասան իբն Կահտաբային¹³: Սա հռոմէների երկիրն արշաւեց եւ այնքան ճնշեց նրա բնակչութեանը, որ եկեղեցիներում նրա պատկերն էին տեղադրել: Նա մուտք էր գործել ալՀադասի կապանից եւ նրա քաղաքի դիրքին նայել: Իմանալով, որ Միքայէլը հեռացել է այնտեղից՝ նա լաւ դիտարկել է նրա քաղաքի դիրքը եւ վերադարձին ալՄահդիի հետ խօսել է նրա եւ Տարսոնի վերակառուցման մասին: Նա հրամայել է նախ վերաշինել ալՀադասը: ... ԱլՀադասը կառուցեց Ալի իբն Սուլայման իբն Ալին, ով ալՋազիրայի եւ Կիննասրինի [կառավարիչն] էր՝ կոչելով ալՄուհամմադիյա: ԱլՄահդին վախճանուեց նրա կառուցումը աւարտին հասցնելով, ուստի կոչուում էր ինչպէս ալՄահդիյա, այնպէս էլ ալՄուհամմադիյա: Այն կառուցուեց աղիւսով: Նրա մահը [հիջրայի] 169 թուականին (785/786) էր¹⁴:

Ըստ ժամանակակից մէկ այլ պատմիչի՝ ալԵսկուբիի (մահ. 897/898)՝

ԱլՀադաս անունով սահմանային ամրութիւնը (բնագրում՝ *al-ṭ aḡr*) կառուցուել է [հիջրայի] 169ին: Նրա [կառուցումը, յիշելով] թշնամու հակադարձում եւ նրա դիմագրաւում էր նշանակում... Երբ այն կառուցուեց, ալՍուլուրի բնակչութիւնը շատ մեծ օգուտ քաղեց նրանից¹⁵:

Muhammad Husayn al-Zubaydi, Պաղտատ, 1981, էջ 320. նաեւ՝ Ibn al-Aṭīr, *Al-Kāmil fī al-tārīḥ*, bi-taḥqīq Abī al-Fidā՝ ‘Abd Allāh al-Qāḍī, ց. 2, Պէյրութ, 1987, էջ 344. նաեւ՝ *Իբն ալԱսիր*, թարգ. բնագրից, առաջաբան եւ ծանօթ.՝ Ա. Տէրղետնդեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1981, էջ 45:

¹⁰ Օմայեան Հարստութեան վերջին խալիֆան է՝ Մրուան Բ.ը (կառ. 744-50):

¹¹ Խօսքը բիւզանդացի յայտնի զօրավար Միքայէլ Լաքանողրակոնի մասին է:

¹² Աբբասեան խալիֆա, ով կառավարել է 775-85:

¹³ Անուանի արաբ զօրահրամանատար: ԱլՄանսուր (իշխ. 744-50) խալիֆայի օրօք զբաղեցրել է Արմինիայի կառավարչի պաշտօնը (իշխ. 754-59)՝ А. Тер-Гевондян, *Армения и Арабский Халифат* (Հայաստանն ու Արաբական խալիֆայութիւնը), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1977, էջ 101, 274:

¹⁴ Պատմիչը շարունակում է, որ Ալի Իբն Սուլայմանը բերդում տեղակայում է 4000անոց կայազօր, ինչպէս նաեւ Մալաթիայից, «Շիմշապից եւ Սումայսապից» (այսպէս է բնագրում), Քեսունից, Տլուքից եւ Ռաբանից 2000 մարդ է տեղափոխում եւ բնակեցնում ալՀադասում (al-Balāḍurī, էջ 268. նաեւ՝ al-Ṭabarī, *Tārīḥ al-rusul*, ց. 8, էջ 142. նաեւ՝ Ibn al-Ḡawzī, *Al-Muntazam fī tārīḥ al-mulūk wa-l-umam*, ց. 8, bi-taḥqīq Muḥammad ‘Abd al-Qāḍir ‘Aṭā wa-Muṣṭafā ‘Abd al-Qāḍir ‘Aṭā, Պէյրութ, 1992, էջ 256):

¹⁵ *Tārīḥ al-Ya’ qūbī*, bi-taḥqīq ‘Abd al-Amin Muḥannā, ց. 2, Պէյրութ, 2010, էջ 339:

ԱլԲալագուրին յետագայ շարադրանքում մեջբերում է ալՎակիդի (մահ. 823) պատմիչի մեզ չհասած մի երկից¹⁶։

ԱլՎակիդին պատմել է, որ ալՀադաս քաղաքի վերակառուցման ժամանակ վրայ են հասել ծմեռն ու ձիւնը, տեղատարափ անձրեւներ են տեղացել։ Նրա շինութիւնները հիմնաւոր չէին, պաշտպանուած չէին, ուստի քաղաքը ճաքճեց, փլուզուեց։ Հոռոմները յարձակուեցին նրա վրայ, եւ այնտեղ եղած զինուորներն ու այլոք ցրուեցին։ ... Ապա [երբ Հարուն ալՌաշիդը խալիֆա դարձաւ, հրամայեց վերակառուցել այն¹⁷, ամրացնել, կայազօր նշանակել, նրա ռազմիկներին աւատներ յատկացնել եւ ռոճիկ նշանակել¹⁸։

Ըստ ալՏաբարիի՝ բերդի կառավարիչը, կայազօրն ու շուկայի վաճառականները (բնագրում՝ *ahl al-aswāq*) փախչում են¹⁹։ Այս փաստը ականարկ է քաղաքի ունեցած առեւտրական կարեւորութեան մասին։

Հարուն ալՌաշիդ խալիֆայի (կառ. 786-809) ժամանակներից սկսած՝ ալՀադասն արաբների համար դառնում է հզօր ռազմավարական յենակէտ Բիւզանդիայի դէմ մղած կռիւներում եւ իսկական կոռափսնծոր հակամարտող կողմերի համար։ Երկու տէրութիւնների հակամարտութիւնը սուր բնոյթ է կրում Թ. դարի 60ականներից սկսած, երբ Բիւզանդիայում իշխա-

¹⁶ ԱլՎակիդիի գրչին է պատկանում Մուհամմադի եւ նրա ռազմական արշաւանքների մասին պատմող *Kitāb al-mağāzī* երկը։ ԱլՎակիդիին է վերագրում նաեւ *Futūh al-Šām* (Ասորիքի նուաճումը) վերնագրով երկը, որում ալՀադասի մասին յիշեալ հաղորդումը բացակայում է։

¹⁷ Ըստ Միքայէլ Ասորու եւ նրանից փոխառած Բար Հերբէոսի՝ Հարուն ալՌաշիդը հրամայել է քանդել Քիշումի (Քեսունի) եւ մերձակայ այլ բնակավայրերի եկեղեցիները եւ քարերը 2000 սայլով տեղափոխել է տուել ալՀադաս՝ բերդի վնասուած պարսպապատերը վերականգնելու նպատակով (*Michel le Syrien, Chronique, t. III, էջ 8 եւ հմմտ.*՝ *The Chronography of Gregory Abū'l-Faraj (Bar Hebraeus), the son of Aaron, the Hebrew Physician, the first part of his Political History of the World, vol. I, trans. Ernest A. Wallis Budge, Oxford University Press, Լոնտոն, 1932 (reprinted by Gorgias Press, 2003), էջ 118*)։ Այս դրուագը պահպանուել է նաեւ ժամանակագրութեան հայերէն տարբերակներում. «Եւ դարձեալ շինեաց Արդլմելէք զՌաշիդ, եւ պապրաստեաց երկու հազար սայլ, եւ քակեաց զեկեղեցիսն որ կային յարեմօրից Շնճէ գետոյն որ է մերձ Սամուսապայ, եւ քակեցին զառաքելաշէն եկեղեցին Քեսնոյ հնգեպասսան խորանի, եւ տարեալ սայլիւն զքարն շինել զՀադ (sic)» (Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորոց պապրիարքի, հանեալ ի հնագոյն գրչագրէ, տպ. Սրբոց Յակովբեանց, Երուսաղէմ, 1871, էջ 354-55. հմմտ. նոյնի՝ Ժամանակագրութիւն, տպ. Սրբոց Յակովբեանց, Երուսաղէմ, 1870, էջ 365)։

¹⁸ Al-Balāḍurī, էջ 268-69։

¹⁹ Al-Ṭabarī, *Tārīḥ al-rusul*, ց. 8, էջ 203-4. նաեւ՝ *The History of al-Ṭabarī, vol. 30 (The 'Abbāsīd Caliphate in Equilibrium)*, trans., annot. by C.E. Bosworth, Նիւ Եորք, 1989, էջ 39. նաեւ՝ *Michel le Syrien, Chronique, t. III, էջ 2. նաեւ՝ Bar Hebraeus, էջ 118*։

նութեան են գալիս Մակեդոնական (Հայկական) հարստութեան ներկայացուցիչները (867-1056), ովքեր իրենց արտաքին քաղաքական օրակարգում ամենամեծ կարեւորութիւնը տալիս էին արեւելեան ուղղութեանը եւ մուսուլմանական պետական կազմաւորումների դէմ պայքարին: Հարստութեան հիմնադիր Վասիլ Ա.ը (կառ. 867-86), յաջողութեամբ չեզոքացնելով Պալիկեան աղանդաւորական շարժումը, ռազմական գործողութիւններ սկսեց արաբների դէմ: Արդէն 873ին կայսրը բիզանդական բանակներն առաջնորդում է դէպի արեւելք՝ յոյս ունենալով գրաւել Մալաթիան: Թէեւ քաղաքը գրաւել չի յաջողում, եւ բիզանդացիները հարկադրուած նահանջում են, բայց ասպատակում են Տարանդան, Սոզոպետրան (Զիբատրան), Սամոսատը: Եւս մի արշաւանք Վասիլ Ա.ը ձեռնարկում է 878/79ին, ասպատակում Մալաթիայի շրջանը, ինչպէս նաեւ կիլիկեան Տարսոնը եւ Ադանան: Նոյն թուականին բիզանդական արշաւախմբերն արդէն հասնում են մինչեւ Մարաշ (Գերմանիկէ) եւ ալՀադաս: ԱլՀադասը ւաւերում է եւ աւարառում²⁰: Բերդաքաղաքի պաշարման ընդարձակ նկարագրութիւնը տալիս է Թէոփանէս Խոստովանողի երկի շարահարողը: Ըստ նրա բերդի պաշտպանները, վախենալով բաց դաշտում մարտ տալուց, ամրացել են բերդում եւ դիմադրութիւն կազմակերպել: Բիզանդացիք ւաւերածութեան են ենթարկել արուարձանները՝ գրաւելով նաեւ մերձակայքում գտնուող Գերոնտ²¹ քաղաքը: Այնուհետեւ, ալՀադասի միջնաբերդը գրաւելու նպատակով կայսրը գործի է դրել պաշարողական մեքենաներ: Ըստ պատմիչի՝ մօտաւուտ ձմռան դժուարութիւններից խուսափելով՝ Վասիլ Ա.ը դադարեցրել է բերդի շրջափակումն ու հեռացել²²:

²⁰ W. Treadgold, *A History of the Byzantine State and Society*, Stanford University Press, Սթենֆորտ, 1997, էջ 457-58:

²¹ Դժուարանում ենք նոյնականացնել:

²² Ihor Ševčenko, *Chronographiae quae Theophanis continuati nomine fertur liber quo Vita Basilii Imperatoris amplectitur. Corpus fontium historiae Byzantinae*, Walter de Gruyter, Պերլին-Պոստոն, 2011, էջ 171, 173, 175, ինչպէս նաեւ Թէոփանէսի Շարունակող (*Օտար աղբիւրները Հայաստանի եւ Հայերի մասին*, 15), թարգ. բնագրից, առաջաբան եւ ծանօթ.՝ Հ. Բարթիկեան, ՀԽՍՀ ԳԱ, Երեւան, 1990, էջ 166-67 եւ հմմտ.՝ Կոստանդին Ծիրանածին (*Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, 6), թարգ. բնագրից, առաջաբան եւ ծանօթ.՝ Հ. Բարթիկեան, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1970, էջ 76-77: Յովհաննէս Սկիլիցէսի շարադրանքը նոյնպէս յար եւ նման է Թէոփանէսի Շարունակողի պատումին եւ յատկանշական տարբերութիւններ չի պարունակում. հմմտ.՝ John Skylitzes, *A Synopsis of Byzantine History 811-1057*, tr. by John Wortley, Cambridge University Press, Քենսլորիճ, 2010, էջ 139-40: Գէորգ Կեդրենոսը, որ գրեթէ նոյնութեամբ արտագրել է Սկիլիցէսի երկը իր աշխատութեան մէջ, *Աղապայի փոխարէն քաղաքն անուանել է Աղապամ* (Georgius Cedrenus *Ioannis Scylitzae ope, t. ab Immanuele Bekkero suppletus et emendatus*, Պոնն, 1839, էջ 214):

Մալաթիան գրաւելու Վասիլի յաջորդ փորձը տեղի է ունենում երեք տարի անց՝ 882ին: Այս անգամ էլ, Բիզանդական զօրքերը պարտութիւն են կրում Մարաշի եւ ալճադասի կայազօրներից եւ նահանջում²³:

Վասիլ Ա.ի յաջորդ Լեւոն Զ.ն (կառ. 886-912) Ժ. դարի սկզբներին յաղթական մարտեր է մղում Աբբասեան Խալիֆայութեանը ենթակայ Տարսուսի ամիրայութեան դէմ եւ արաբական սահմանային ամրութիւնների նուաճման ուղղութեամբ: 904ին նա հռոժկու յարձակման է ենթարկում ալճադասը եւ գուցէ եւ գրավէր, եթէ Ասորիքից մի արաբական նաւատորմ անակնկալ չմօտենար եւ չսպառնար մայրաքաղաք Կոստանդնուպօլսին²⁴:

Բերդաքաղաքին տիրելու համար բիզանդացիների եւ արաբների միջեւ յատկապէս հռոժկու մարտեր են մղուել Ժ. դարի 40-50ականներին: Բիզանդացիների դէմ «սրբազան պատերազմի» դրօշակակիրն այս ժամանակ արդէն Հալէպի Համդանեան էմիր Սայֆ ալ-Դաուլան (կառ. 945-67) էր: 948ին (հիջրայի 336) բիզանդական բանակի գերագոյն հրամանատար հայազգի Վարդաս Փոկաս Աագի որդի՝ Կապադովկիայի բանակաթեմի (ռազմավարչական շրջանի) ստրատեգոս Լեւոնի²⁵ գլխավորութեամբ բիզանդացիները կրկին գրոհում են արաբական սահմանային ամրութիւնների գօտին: Թէեւ Սայֆ ալ-Դաուլան յաջողութեամբ ետ է մղում բիզանդացիներին, այնուամենայնիւ, Լեւոն Փոկասը գրաւում եւ հիմնայատակ աւերում է սահմանային ալճադասի ամրութիւնները²⁶:

Սայֆ ալ-Դաուլան 953ին մտադրում է վերակառուցել ալճադասը, Սամոսատը եւ Մարաշը, ինչը, պարզ է, որ կայսր Կոստանդին Ծիրանածինը (913-59) թոյլ տար չէր կարող: Բիզանդիայի արեւելեան բանակների գերագոյն հրամանատար Վարդաս Փոկասի՝ Հալէպի էմիրի մտադրութեան իրականացումը վիժեցնելու փորձն անփառունակ վախճան է ունենում: 954ի Հոկտեմբերի 30ին (հիջրայի 343, Ջումադա II ամսի 29) ալճադասի

²³ Al-Tabarī, *Tārīḥ al-rusul*, ց. 9, էջ 612. նաեւ՝ Ibn al-Aṭīr, *Al-Kāmil*, ց. 6, էջ 314. նաեւ՝ Տէրղետնդեան, *Իրն ալԱսիր*, էջ 169:

²⁴ Al-Tabarī, *Tārīḥ al-rusul*, ց. 10, էջ 116. նաեւ՝ Ibn al-Aṭīr, *Al-Kāmil*, ց. 6, էջ 423. նաեւ՝ al-Ḍahabī, *Tārīḥ al-Islām wa-wafayāt al-mašāḥir wa-l-a' lām*, ց. 22, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, Պէյրուօ, 1991, էջ 6. նոյնի՝ *Duwal al-Islām*, ց. 1, bi-tahqīq Ḥasan Ismā'īl Marwa, Պէյրուօ, 1999, էջ 262. նաեւ՝ Sh. Tougher, *The Reign of Leo VI (886-912): Politics and People*, Brill, Լէյտէն-Նիւ Եորք-Քէօլն, 1997, էջ 189-90:

²⁵ Փոկասների ընտանիքի մասին տե՛ս՝ А.П. Каждан, *Армяне в составе господствующего класса Византийской Империи* (Ա.Պ. Կաժդան, Հայերը Բիզանդական Կայսրութեան աւագանու կազմում ԺԱ.-ԺԲ. դդ.), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 71-74:

²⁶ Yahyā al-Anṭākī, *Tārīḥ al-Anṭākī*, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, Թրիփոլի, 1990, էջ 77. նաեւ՝ Ibn Wāṣil, *Kitāb al-Tārīḥ al-ṣāliḥī*, ց. 2, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, Սայտա-Պէյրուօ, 2010, էջ 51:

մօտ՝ Ուհայդաբ լեռան ստորոտում, տեղի է ունենում արաբա-բիզանդական հակամարտության ամենավճռական ճակատամարտերից մեկը: Այդ օրը Վարդաս Փոկաս Աագի գլխավորած զորքը բախում է Սայֆ ալ-Դաուլայի առաջնորդած մուսուլմանական զորքին եւ խայտառակ պարտութիւն կրում: Բիզանդացի զորապետը հազիւ է փրկւում մահից, իսկ նրա որդին եւ փեսան գերեվարւում են²⁷: Հալէպի էմիրի այս յաղթանակը լայն արձագանգ է գտել ոչ միայն ժամանակի պատմական գրականութեան մէջ, այլեւ արաբական քնարերգութեան մէջ: Սայֆ ալ-Դաուլայի յաղթանակը եւ բերդի վերակառուցումը գովերգող ներբողներ են նուիրել ալ-Մութանաբբին (մահ. 965) եւ Աբու Ֆիրասը (մահ. 968): Մասնատրապէս ալ-Մութանաբբիի՝ Սայֆ ալ-Դաուլային ծօնուած *կասիդաները* համարւում են միջնադարեան արաբական ներբողական քնարերգութեան գոհարներ²⁸: Տողերից մէկում նա գրում է, որ հոռոմների կայսր Իբն Լաւոնը (նկատի ունի Լեւոն Զ. կայսեր որդուն՝ Կոստանդին Ծիրանածինին) բազմազգ բանակ էր դուրս բերել Սայֆ ալ-Դաուլայի դէմ.

Եւ ինչպէ՞ս պիտի յոյներն ու ռուսները յոյս ունենային, որ կը քանդեն այն,
Եթէ հիմքն ու սիւները նրա պաշտպանուած էին նիզակիդ զարկով²⁹:

Աբու Ֆիրաս ալ-Համդանիի դիւանում ռուսների հետ միասին յիշատակւում են նաեւ բիզանդական բանակում կոռուղ հայեր եւ սլաւոններ³⁰: Իբն ալ-Ասիրը խօսում է բիզանդական բանակում կոռուղ *«հոռոմների, ռուսների, բուլղարների եւ այլոց»* մասին³¹, Իբն Ջաֆիր ալ-Ազդին (մահ. 1216) էլ *«այլոց»* տեղում յիշատակում է հայերին:

Այս յաղթանակը հնարաւորութիւն է տալիս Սայֆ ալ-Դաուլային աւարտին հասցնել ալ-Հադասի վերակառուցումը: Ըստ ալ-Ազդիմի (մահ. 1161) պատմիչի՝ Սայֆ ալ-Դաուլան անձամբ իր ձեռքով առաջին քարը դնելով՝ մեկնարկ է տուել հիմնարկէքին³²: Երեք տարի անց, սակայն, իրավիճակը, կտրուկ շրջադարձ է կատարում յօգուտ Բիզանդիայի, երբ կայսրութեան արեւելեան բանակների հրամանատարութիւնը ստանձնում է Վարդասի

²⁷ Yahyā al-Anṭākī, էջ 84. նաեւ՝ Ibn al-Aṭīr, *Al-Kāmil*, ց. 7, էջ 250. նաեւ՝ Տէրղետնդեան, *Իբն ալ-Ասիր*, էջ 189-90. նաեւ՝ Ibn al-Adīm, *Zubdat al-halab min tārīḥ ḥalab*, waḍḍa ‘a hawāših Ḥalil al-Manṣūr, Պէյրութ, 1996, էջ 73-74:

²⁸ Կասիդայի արաբերէն բնագիրը տե՛ս՝ *Diwān al-Mutanabbī*, Պէյրութ, 1983, էջ 378-92, իսկ մանրամասն վերլուծութեան եւ ուսումնասիրութեան համար տե՛ս՝ J.D. Latham, “Towards a Better Understanding of al-Mutanabbī’s Poem on the Battle of al-Hadath,” *Journal of Arabic Literature*, 1979:10, էջ 1-22: Սայֆ ալ-Դինին նուիրւած ծօներգերի վերաբերեալ ուսումնասիրութիւնը տե՛ս՝ A. Hamori, *The Composition of Mutanabbī’s Panegyrics to Sayf Al-Dawla*, E.J. Brill, Լէյտէն, 1992:

²⁹ *Diwān al-Mutanabbī*, էջ 386:

³⁰ *Diwān Abī Firās al-Ḥamdānī*, bi-taḥqīq Sāmī al-Dahhān, Պէյրութ, 1944, էջ 145:

³¹ Ibn al-Aṭīr, *Al-Kāmil*, ց. 7, էջ 250:

³² Al-‘Azīmī, *Tārīḥ Ḥalab*, bi-taḥqīq Ibrāhīm al-Za‘rūr, Դամասկոս, 1984, էջ 295:

որդի Նիկեֆորոսը (ապագայ կայսր Նիկեֆորոս Բ. Փոկաս՝ կառ. 963-69): Վերջինս 957ին գրաւում է ալՀադասը եւ կրկին քանդում բերդի ամրութիւնները³³: Սայֆ ալԴաուլան պատրաստում է պատասխան արշաւանք կազմակերպել, սակայն Նիկեֆորոսը կաշառում է էմիրի մերձատրոններից միքանիսին եւ փորձում դաւադրաբար սպանել նրան: Ճիշտ է՝ խռովութիւնը բացայայտում է, եւ դաւաճանները պատժում են, բայց Սայֆ ալԴաուլայի արշաւանքը կասեցւում է: Նախաձեռնութիւնը սահմանագօտում անցնում է Բիզանդիայի ձեռքը. կարճ ժամանակ անց կայսրութեանն են անցնում նաեւ Սամոսատը (958) եւ Մարաշը (962):

Այս դէպքերից իվեր ալՀադասն անցնում է բիզանդական վերահսկողութեան տակ եւ հաւանաբար որոշ ժամանակ անց նաեւ ինչ-որ չափով վերականգնում: Ժ. դարով թուագրուող «[Ոսոխի հետ] բախումների մասին» (յուն.՝ Νεπὶ Παράδρομῆς, լատ.՝ De velitatione bellica) անանուն աշխատութիւնը վկայում է, որ ալՀադասում, Սամոսատում եւ Մարաշում անգամ փոքր բանակաթեմեր են կազմակերպուել³⁴:

Վերոբերեալ դէպքերի ժամանակակից Իբն Հաուկալը (մահ. 978ից յետոյ) իր *Ṣūrat al-arḍ* (Երկրի պատկերը) աշխարհագրական երկում, լրացնելով մէկ այլ աշխարհագրագէտ Իսթախրիի (մահ. 934) *Kitāb Masālik al-Mamālik* (Գիրք թագաւորութիւնների ճանապարհների) երկից քաղած հաղորդումը ալՀադասի (ինչպէս նաեւ ալՄարաշի) վերաբերեալ, գրում է.

ԱլՀադասն ու Մարաշը երկու փոքր քաղաքներ են, որոնք մինչ այս գրաւել էին հռոմէները, բայց Սայֆ ալԴաուլա Ալի [ի]բն Աբդալլահը ետ է վերցրել: Յետոյ նորից հռոմէները վերադարձան եւ երկրորդ անգամ դրանք խլեցին մուսուլմաններից: Նրանք ցանքսեր, ծառեր եւ մրգեր (իմա՝ պտղատու այգիներ) ունեն: Երկուսն էլ սահմանային ամրութիւններ են, որտեղ մուսուլմանները կայազօր էին պահում, որտեղից սրբազան պատերազմ էին մղում, աւարառում³⁵:

982ով թուագրուող *Hudūd al-‘ālam min al-mašriq ilā al-mağrib* (Աշխարհի սահմանները՝ արեւելքից արեւմուտք) անանուն պարսկալեզու աշխարհագրական երկի հեղինակը պարզապէս երկրորդում է իր նախորդներին. «Մարաշն ու Հադասը երկու բարեկեցիկ, շէն փոքր քաղաքներ են՝ առաւր ցանքսերով եւ հոսուն ջրերով»³⁶:

³³ Yahyā al-Anṭākī, էջ 87-88:

³⁴ *Three Byzantine Military Treatises*, text, translation, and notes by G.T. Dennis, Dumbarton Oaks, Ուաշինկթըն, 1985, էջ 231:

³⁵ Ibn Hawqal, *Kitāb Ṣūrat al-arḍ*, Manṣūrāt Dār Maktabat al-Hayāt, Պէյրուս 1992, էջ 167. հմմտ.՝ Istahṛī, *Kitāb masālik al-mamālik*, M. J. de Goeje (ed.) , E.J. Brill, Լէյդէն, 1870, էջ 62-63:

³⁶ *Hudūd al-‘ālam, The Regions of the World: A Persian Geography, 372 A.H.-982 A.D.*, translated and explained by V. Minorsky, Oxford University Press, Լոնտոն, 1937, էջ 149:

Յատկանշական է, որ ալՀադասից ոչ հեռու՝ անլի շատ Մարաշի մօտ, մի լիճ է եղել, որ բերդաքաղաքի անունով կոչուել է «ալՀադասի լիճ» (այժմ՝ Գինիսի-գէօ): Եակուտ ալՀամաուիի աշխարհագրական բառարանում այդ լճակի մասին ասում է. «Մարաշի մօտ է՝ հոռոմների երկրի կողմում: Նրա սկիզբը Իբն ալՇիի կոչուող գիտի մօտ է՝ ալՀադասից 12 մղոն հեռավորության վրայ՝ Մալաթիայի ուղղությամբ: Այն ձգում է դէպի ալՀադաս, որն ամուր բերդ է»³⁷:

Արաբ աշխարհագիրները հաղորդում են նաեւ, որ «ալՀադասի լճից» սկիզբ էր առնում ալՀուրիս գետակը (այժմ՝ Ակ-սու), որը թափում էր Զայ-հան գետը³⁸:

Իբն Հաուկայի երկից վերելում մեջբերուած հաղորդումը անանուն գրչի կողմից արուած ընդմիջարկութիւն է պարունակում, որ վկայում է, որ բերդը ԺԲ. դարի կէսին գրաւուել է Իկոնիայի սելջուկեան սուլթանութեան կողմից. «Մուսուլմանները վերադարձան եւ գրաւեցին այն: Այն [հիջրայի] 545 թուականին (1150/51) գրաւեց Մասուդ իբն Կիլիջ Արսլան Սալջուկը՝ Ռումի երկրի տէրը, եւ այն այժմ մուսուլմանների ձեռքում է»³⁹:

Սիկիլիայի արքայ Ռոջէր Բ.ի (կառ. 1130-54) արքունի աշխարհագրագէտ ալիդրիսին (մահ. 1165), ով իր երկն աւարտել է 1154ին, այսպէս է գրում ալՀադասի մասին. «ԱլՀադասն ու Մարաշը մեծութեամբ իրար գրեթէ հաւասար երկու քաղաքներ են՝ ամուր պարիսպներով եւ շուկաներով, որտեղ շատերն են գալիս առելորի եւ օգտակար ապրանքների համար»⁴⁰:

Եակուտ ալՀամաուիի (մահ. 1229) *Mu‘ğam al-buldān* (Երկրների բառարան) երկում բերդի մասին ասում է. «ալՀադասն ամուր բերդ է սահմանային ամրութիւնների գօտու Մալաթիա, Սումայսապ եւ Մարաշ [քաղաքների] միջեւ: Այն ալՀամրա (կարմիր) է կոչում, որովհետեւ նրա հողն ամբողջութեամբ կարմիր է: Նրա միջնաբերդը լեռան վրայ է, որն ալՌուհայդաբ են կոչում: ԱլՀասան իբն Կահրաբան արշաւել էր սահմանային ամրութիւնների գօտի եւ ջախջախել թշնամուն: Նա ալՄահդիի մօտ եկաւ եւ հաղորդեց Տարսոնի եւ Մսիսի վերաշինման կարեւորութիւնը մուսուլման-

³⁷ Yāqūt al-Ḥamawī, *Mu‘ğam al-buldān*, ց. 1, Dār ṣāḍir, Պէյրութ, 1977, էջ 351. նաեւ՝ Նալբանդեան, էջ 33:

³⁸ Guy le Strange, "Description of Mesopotamia and Baghdād, Written about the Year 900 A.D. by Ibn Serapion, The Arabic Text Edited from a MS. in the British Museum Library, with Translation and Notes", *The Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland*, Jan. 1895, էջ 63, 67-68. նաեւ՝ Yāqūt al-Ḥamawī, *Mu‘ğam al-buldān*, ց. 5, էջ 320. նաեւ՝ Նալբանդեան, էջ 119:

³⁹ Ibn Hawqal, էջ 167:

⁴⁰ Al-Idrisī, *Nuzhat al-muštāq fi ihtirāq al-afāq*, Maktabat al-ṭaqāfa al-diniyya, Գահիրէ, 2002, էջ 652:

ների համար: Նա հրամայեց կառուցել դրանք, ինչպես եւ ալՀադասը: Սա քեդի ունեցաւ [հիջրայի] 162ին»⁴¹:

Բերդի մասին ժամանակագրական յաջորդ վկայութիւնը պատկանում է Քամալ ալԴին իբն ալԱդիմին (մահ. 1262), ով, ինչպես ինքն է պնդում, անձամբ եղել է քաղաքում: Պատմիչի հաղորդումը որոշ լրացումներ է պարունակում բերդամրոցի վերաբերեալ նախորդ սերնդի հեղինակներից մեկ յայտնի տեղեկութիւններին: Նա մասնատրապէս գրում է.

Յայտնի է ալՀադաս ալՀամրա անունով իր հողի կարմրութեան համար: Ջրառատ եւ ցանքսերով հարուստ քաղաք է, որի շուրջը բազմաթիւ գետեր կան: Ամրոցը քանդուել է. մնացել է միայն քաղաքը: Մեր օրերում այնտեղ բնակւում են հայեր՝ «զիմմիներ» (ahl al-dimma)⁴²: Այն մուսուլմանների ձեռքում է: Նրա մարգագետիններն էին իջնում քրդերն իրենց անասունների հօտերով: Հայերն այն Քայնուք են կոչում, քրդերը՝ ալՀաթթ, արաբները՝ ալՀադաս: Հնում այն կոչւում էր ալՄուհամմադիյա կամ ալՄահդիյա, որովհետեւ այն վերաշինել էր ալՄահդի Մուհամմադ Իբն Մանսուրը, Ալլահն օրհնի նրան: Քուֆայից այնտեղ բնակուելու է տեղափոխուել Աբու Մուհամմադ Իսա Իբն Եունիս ալՍաբիին: Նա այնտեղ ռազմիկ է եղել, մինչեւ մահը: Նրանից յետոյ նրա որդին է այնտեղ մնացել: ԱլՄուհայրաբ անունով լեռը հարաւի կողմից ձգւում է նրա վրայ: Ռում գնալու ճանապարհին ես տեսել եմ այն եւ ոտքս դրել նրա հողին⁴³:

Այսպիսով, Իբն ալԱդիմի վկայութեամբ իր կեանքի օրօք բերդամրոցը կիսաքանդ վիճակում է եղել, քաղաքը՝ հայաբնակ: Հաղորդումից պարզ է, թէ հալէպցի պատմիչը, որ թուականին է եղել ալՀադասում: *Buğyat al-ṭalab* երկի ուսումնասիրող Դ. Մորէյը կարծում է, որ Իբն ալԱդիմը շարունակել է աշխատել իր երկի վերջնական խմբագրութեան վրայ ընդհուպ մինչեւ իր մահը⁴⁴: Հետեւաբար, աշխատութիւնը թուագրելի է 1260-62ով, երբ նա, Հոլաղուի ասորիքեան արշաւանքից յետոյ, տեղափոխուել եւ

⁴¹ Yāqūt al-Ḥamawī, ց. 2, էջ 227. հմմտ.՝ al-Balādhurī, էջ 231-32. նաեւ՝ Տէրդետոնդեան, *Արաբ մատենագիրներ*, էջ 240-41: Իբն Աբդ ալՀակկ ալԲաղդադիի (մահ. 1339) *Marāʾiḍ al-iṭṭilāʾ*՝ երկը ոչինչ չի յաւելում Եակուտի հաղորդածին (Ibn ʿAbd al-Haqq al-Bağdādī, *Marāʾiḍ al-iṭṭilāʾ*՝ *alā asmāʾ al-amkina wa-l-biqāʾ*, ց. 1, Dār al-ğil, Պէյրութ, 1992, էջ 385):

⁴² Իսլամական կրօնափրաւագիտութեան տեսանկիւնից այսպէս էր կոչւում մուսուլմանական պետութեան ոչ մուսուլման՝ այն է քրիստոնէութիւն, յուդայականութիւն, զրադաշտականութիւն եւ այլ կրօններ դաւանող բնակչութիւնը: Կեանքի եւ ունեցուածքի ապահովութեան երաշխիք ունենալով՝ *զիմմիները* պարտաւոր էին ճանաչել իսլամի գերակայութիւնը հասարակական կեանքի բոլոր բնագաւառներում եւ վճարել ջիզիա, այսինքն՝ գլխահարկ:

⁴³ Ibn al-ʿAdīm, *Buğyat al-ṭalab fi tāriḥ Ḥalab*, ց. 1, bi-tahqīq Suhayl Zakkār, Պէյրութ, 1988, էջ 239:

⁴⁴ D.W. Morray, *An Ayyubid Notable and His World: Ibn al-ʿAdīm and Aleppo as Portrayed in His Biographical Dictionary of People Associated with the City*, E.J. Brill, Լէյտէն-Նիւ Եորք, 1994, էջ 166-74:

բնակում էր Եգիպտոսում: Արդեօ՞ք սա նշանակում է, որ բերդը Կիլիկեան Հայաստանի կազմում է յայտնուել միայն 1260ից յետոյ: Երեւի թէ ո՛չ՝ նախ եւ առաջ այն պատճառով, որ պատմիչի վկայութեամբ իր այցելութեան օրօք բերդի բնակչութիւնը արդէն ամբողջովին հայկական էր: Եւ յետոյ մենք հնարաւորութիւն ունենք ճշտելու Իբն ալԱդիմի՝ Ռումի սելջուկեան սուլթանութիւն մեկնելու թուականը: Իր միւս Zubdat al-Halab երկում նա գրում է, որ 1237ին երկու անգամ որպէս դեսպան մեկնել է Կայսերի (Կեսարիա)՝ մի անգամ սուլթան Ալա ալԴին Քայխուբադ Ա.ի (1220-37) մահուան կապակցութեամբ որդուն՝ Քայխուսրով Բ.ին (1237-1246) Հալէպի էմիր ալՆասիր Եուսուֆի (1236-60) կողմից ցաւակցութիւններ հաղորդելու⁴⁵, եւ երկրորդ անգամ՝ վերջինիս եւ Քայխուսրովի քրոջ ամուսնութիւնը կազմակերպելու համար⁴⁶: Նշանակում է՝ ալՀադասի վերաբերեալ պատմիչի վկայութիւնը թուագրելի է 1237ով: Ենթադրում ենք, որ բերդը մեզ անյայտ հանգամանքներում անորոշ ժամանակով հայկական վերահսկողութեան տակ է յայտնուել դեռեւս 1230ականներին, եւ այդ ժամանակ է, որ բնակեցուել է հայերով: Ինչպէս երեւում է, սելջուկները, այնուհանդերձ, կրկին վերականգնել են իրենց վերահսկողութիւնը բերդի վրայ, եւ այդ ընթացքում է, որ Իբն ալԱդիմն եղել է ամրոցում:

Աղբիւրների հաղորդմամբ 1231ին Եգիպտոսի Այուբեան սուլթան ալՄալիք ալՔամիլը (1218-38) արշաւանք է կազմակերպել Ռումի սուլթանութեան դէմ: Իբն Բիբիի (մահ. 1285) վկայութեամբ սուլթան Քայ Կուբադ Ա.ը նրա դէմ է ուղարկել է Քամալ ալԴին Քամյարին եւ Սիր Քասրի անունով մի իշխանի: Նրանց խնդիրն էր պարեկել ալՀադասից Ալբիստան տանող Ակչէ (Ակջահ) դարբանդը (*Aqğah darband*, Սպիտակ կապան): Քամալ ալԴինը ծառերով եւ քարերով փակում է կապանի անցքերը, սպասելով սուլթանական ուժերի ժամանմանը⁴⁷: «Սիր Քասրի» անունը Կահէնին թոյլ է տուել ենթադրել, որ նա թերեւս ֆրանկ պիտի եղած լինի՝ հաւանաբար Կիլիկիայից⁴⁸: Այս պարագայում, թերեւս, հարցերի թնջուկի հանգուցալուծումը շատ մօտ է թոււմ, բայց սկզբնաղբիւրային տուեալների սղութիւնը հնարաւորութիւն չի տալիս աներկմիտ եզրակացութիւններ անել:

⁴⁵ Ibn al-‘Adīm, *Zubdat al-halab*, էջ 491:

⁴⁶ Նոյն, էջ 495-96:

⁴⁷ *Recueil de Textes Relatifs à L'Histoire Des Seldjoucides*, vol. III, *Histoire des Seldjoucides d'Asie Mineure d'après l'abrégé du Seldjoucnaméh d'Ibn-Bībī*, par M. Th. Houtsma, E.J. Brill, Լէյտէն, 1902 (երկի համառոտ տարբերակն է՝ Ibn Bībī, *Muhtaşar*, էջ 192, նոյնի՝ *El-Evāmirü’l-‘Alā’iyye fī’l-umūri’l-‘Alā’iyye*, onsöz ve fihristi hazırlıyan A.S. Erzi, Türk Tarih Kurumu Basımevi, Անկարա, 1956, էջ 437-38 (երկի ամբողջական տարբերակ):

⁴⁸ Cl. Cahen, *La Turquie Pré-Ottomane (Varia Turcica VII)*, Institut Français d'Études Anatoliennes, Իսթամպուլ, 1988, էջ 87:

Արաբական պատմագրության մէջ պահպանուած եւս մի վկայութիւն կայ, որ հերքում է այն վարկածը, թէ ալՀադասը Կիլիկեան Հայաստանի կազմում է յայտնուել մոնղոլների 1260 ասորիքեան արշաւանքից յետոյ միայն: Խօսքը մամլութեան սուլթան Բայբարսի արքունի քարտուղար եւ վարքագիր Իբն Աբդ ալԶահիրի (մահ. 1293) *Al-Rawḍ al-zāhir fī sirat al-Malik al-Zāhir* (Ծաղկուն պարտէզ ալՄալիք ալԶահիրի կեանքի մասին) երկի մասին է: «Վարքագրութեան հեղինակը պատմում է, - գրում է հեղինակը՝ նկատի ունենալով ինքն իրեն, - որ այս Քայնութը նոյն *al-Hadaṭ al-hamrāʾ*ն է, որ կառուցել է Սայֆ ալԴաուլա իբն Համդանը: Նրա Քայնութ անուանումը «հրկիզուած» է նշանակում: Ստում իշխող պայլը՝ Կոստանդին անունով, ով Սսի այժմեան փրորջ պապն էր, գրաւել էր այն սելջուկեան Ռումից եւ կրակի փռել: Հենց նրա կառուցման մասին է, որ ալՄուֆա-նաբբին ասել է իր մի կասիդայում՝ գովերգելով Սայֆ ալԴաուլա իբն Համդանին: Այն [այսպէս] է սկսում.

Կարելոր որոշումները կարելոր մարդկանց կարողութիւնն են:

Արդեօ՞ք *al-Hadaṭ al-hamrāʾ* [ամրոցը] գիտի, թէ ինչ գոյն ունի,

Կամ միթէ՞ գիտի, թէ ինչ հեղուկ են ցօղում ամպերը.

Մինչ նրա գալը ճեփ ամպերն էին [անձրել] տեղացել,

Իսկ երբ մօտ եկաւ, ծածկուեց [անթիւ] գանգերի [արեամբ]:

Նա շինեց այն վեհ, ինչպէս նիզակն է նիզակի բախում,

Իսկ շուրջը մահուան [գոռ] կոհակներն են զարնում իրար:

Այնտեղ առկայ էր մի ինչ-որ [զգացում] խելագարութեան,

Շուրջը հմայիլներ՝ [ահարկով] սպանդից ընկած դիերից:

Քշուած էր այն ինչպէս վտարանդին դարի, բայց քո նիզակով

Վերադարձրիր այն հյանուն կրօնի՝ հակառակ դարի⁴⁹:

Նրա մասին յայտնի է, որ Սայֆ ալԴաուլա իբն Համդանն է սկսել կառուցել այն: [Հիջրայի] 337 թուականին բերդի բնակիչները անվտանգութեան երաշխիքով այն յանձնել էին ալԴումեստիկին՝ հոռոմ քրիստոնէաների արքային: Սակայն [հիջրայի] 343 թուականի Զումադա ալախիրա [ամսի] 12ին՝ Չորեքշաբթի օրը, Սայֆ ալԴաուլան պաշարել է այն եւ նրա հիմքը զցել մէկ օրուայ ընթացքում՝ առաջինը հենց իր ձեռքով փորելով հիմքը: Նա այնտեղ մնաց այնքան ժամանակ, մինչեւ նրա շինարարութիւնն աւարտին չհասցրեց՝ Ռաջաբ ամսի 13ին՝ Երեքշաբթի օրը⁵⁰:

Փաստօրէն, Իբն Աբդ ալԶահիրի պնդմամբ՝ բերդը հայկական վերահսկողութեան տակ է անցել՝ Հեթում Ա. արքայի (կառ. 1226-69) հայր, պայլ Կոստանդին Գունդստաբլի (մահ. 1263) կողմից Ռումի սելջուկեան սուլթանութիւնից խլուելով: Պատմիչը, այնուամէնայնիւ, չի թուագրում իր տեղեկութիւնը եւ ոչ էլ մատնանշում է իր ձեռքի տակ եղած սկզբնաղբիւրը: Եթէ

⁴⁹ Hamori, էջ 10-11. հմմտ.՝ Latham, էջ 1-22:

⁵⁰ Ibn ʿAbd al-Zāhir, *Al-Rawḍ al-zāhir fī sirat al-Malik al-Zāhir, bi-tahqīq ʿAbd al-ʿAzīz al-Ḥuwayṭir*, Ռիատ, 1976, էջ 417:

զուգադրենք երկու պատմիչների հաղորդումները, ապա բերող Կոստանդին Պալլը պետք է տիրացած լինի 1230ականների սկզբներին մի ինչ-որ անորոշ ժամանակով եւ յետոյ կրկին զիջած լինի սելջուկներին: Բերող հաւանաբար վերջնականապէս Կիլիկեան Հայաստանի մաս է կազմել 1250ականների վերջերին եւ 1260ականների սկզբներին, երբ Հերթումը մոնղոլների աջակցութեամբ տիրացել է Եփրատացիքի եւ շրջակայքի այն հողերին, որոնք մի ժամանակ Փիլարտոս Վարաժնունուն եւ Գող Վասիլին էին պատկանել⁵¹: Այդ նուաճումներով հայոց թագաւորութեան սահմանները, փաստօրէն, ընդարձակուեցին ընդհուպ մինչեւ Եփրատ գետը՝ մինչեւ կաթողիկոսանիստ Հռոմկլա: Ըստ արաբ հեղինակների՝ այս շրջանում հայոց թագաւորութեանն են անցել մասնաւորապէս Բեհեսնա, Ռաբան, Դարպասկ, Մարզուբան (Մարզաբան), Շիհ ալՀադիդ, Քեսուն բերդերը⁵²:

Ժամանակի աղբիւրներից տեղեկանում ենք, որ Հերթումը մի շարք բերդեր է խլել նաեւ Ռումի սուլթանութիւնից: Ըստ Հերթում արքայորդու «Ճաշոց»ի (1286) յիշատակարանի՝ «...նա (Հերթումը - Գ. Դ.) աւգնութեամբն Աստուծոյ եւ ձեռնպոտութեամբ Մուղալ զարունն էառ զմեծն Գերմանիկէ եւ զՊեհեսնի, թափեաց եւ զնախնեաց իւրոց զաշխարհ՝ գլափշտակեալն յայլոց»⁵³: Ըստ Իբն ալՇիհնայի՝ հիջրայի 656ին (1258) Մարաշը գտնուում էր

⁵¹ Cl. Cahen, *La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche*, Geuthner, Փարիզ, 1940, էջ 705. նաեւ՝ S. Der-Nersessian, "The Kingdom of Cilician Armenia", *A History of the Crusades, vol. II: The Later Crusades 1189-1311*, gen. ed. K. M. Setton, The University of Wisconsin Press, 1969, էջ 653. նաեւ՝ M. Canard, "Le Royaume d'Arménie-Cilicie et de Mamelouks jusqu'au traité de 1285", *Revue des Études Arméniennes*, 1967:IV, էջ 222:

⁵² Այս մասին այլուր մանրամասն խօսել ենք՝ մատնանշելով սկզբնաղբիւրների տեղեկութիւնները (Գ. Դանիէլեան, Վ. Տէրդետոնդեան (համահեղինակ), «Կիլիկեան Հայաստանի տարածքային ձեռքբերումները Հուլաղուի 1260 թ. ասորիքեան արշաւանքից յետոյ», *Էջմիածին*, 2017:ՀԴ(Ա), էջ 59-67:

⁵³ Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. № 979 («Ճաշոց»), թերթ 475ա. նաեւ՝ Հայերէն ձեռագրերի յիշարակարաններ, ԺԳ. դար, կազմեց Ա.Ս. Մաթետոսեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1984, էջ 587. հմմտ.՝ Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յառաջ. եւ ծանօթ.՝ Արշակ Տէրմիքէլեանի, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի տպարան, 1892, էջ 221. նաեւ՝ Hayton, "La Flor des Estoires de la Terre d'Orient", *Recueil des Historiens des Croisades. Documents Arméniens, t. 2*, Փարիզ, 1906, էջ 171. հմմտ.՝ Վահրամայ Րաբունոյ *Ուրանաւոր պատմութիւն Ռուբենեանց*, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ Վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 220: Այս մասին տե՛ս նաեւ՝ R. Grousset, *The Empire of the Steppes*, tr. from French by Naomi Walford, Rutgers University Press, Նիւ Ճերսի, 1970, էջ 362. նաեւ՝ Cahen, *La Syrie*, էջ 705. նաեւ՝ Г.Г. Микаелян, *История Куликийского Армянского Государства* (Կիլիկիայի հայկական պետականութեան պատմութիւն), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1952, էջ 333. նաեւ՝ Cl. Mutafian, *L'Arménie du Levant*

Իմադ ալ-Դին անունով մի կառավարչի ձեռքում, որի ընտանիքը քաղաքին տիրում էր արդեն 50 տարուց անելի: Պատմիչը շարունակում է, որ «Իմադ ալ-Դինը աղաջիդների (աղաջ-էրի)⁵⁴ եւ հայերի յարձակումների յաճախացման պատճառով այլեւս անկարող էր պահել այն: Նա նամակ գրեց Ռումի Կոնստանդինոպոլիսի Բայկատունիին՝ բերդը նրան յանձնելու մտադրությամբ, բայց վերջինս հրաժարուեց: Գրեց նաեւ Ասորիքի Կոնստանդինոպոլիսի Բայկատունիին, բայց վերջինս նոյնպէս հրաժարուեց ընդունել բերդը: Եւ երբ նրա վիճակը բարդացաւ, [հարկադրուած] թողեց այն եւ հեռացաւ, որից յետոյ նրան փոխեցին հայերը»⁵⁵:

Իսկ 1262ին Թորոս Ռուսիկի ձեռքով գրուած մի ձեռագրի յիշատակարանում ասում է. «Այլեւ բարեպաշտութեամբն իրով յԱսորուստ զորացեալ հէրքեր զոյս հաքարածին ծննդոցն եւ անաւրինաց սեռիցն, բազում անգամ յաղթեալ սուլտանին Հոռոմոց, եւ առեալ զամուրս նորա՝ զանմապչելին Մունտաս, եւ զՄանիաւնն, զՍիկի եւ զայլս բազում զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ: Որ եւ յայսմ ամի առ նա եւ զամուր դղեակն զոյսակապ եւ զյգանատուն Պեհեսնի, որ ար Ի եւ Ե (25) էր ամսէանն հոգտեմբերի»⁵⁶: Իկոնիայից խլուած այս բազմաթիւ բերդերից մէկն էլ հաւանաբար Քայնուքն է եղել, որը Կոստանդինոպոլիսի սկզբում հրոյ ճարակ է դարձրել, բայց յետոյ, հասկանալով նրա ռազմավարական կարեւորութիւնը՝ ամրացրել:

(Xle-XIve siècle), Les Belles Lettres, Փարիզ, 2012, էջ 149. նաեւ՝ A.D. Stewart, *The Armenian Kingdom and the Mamluks: War and Diplomacy during the Reigns of He 'tun II (1289-1307)*, Brill, Լեյտէն, 2001, էջ 46-47, ծնթ. 10:

⁵⁴ Բնագրում՝ «*ag̃ag̃iriyga* (բառացի՝ «անտառի մարդիկ», «ծառերի մարդիկ»): Աղաջ-էրիները թիւրք-օղուզական ցեղախմբեր էին, որ սովորութիւն ունէին անտառներում բնակուել (Рашид-ад-Дин, *Сборник Летоисчисл.* (Ռաշիդ-ադ-Դին, ժամանակագրութիւնների ժողովածու), *հրդ. 1, Գիրք 1*, թարգ. պարսկերենից՝ Լ.Ա. Խետագուրովայի, խմբ. եւ ծանօթ.՝ Ա.Ա. Սեմիոնովա, ՍՍՀՄ ԳԱ հրատ., Մոսկուա-Լենինկրատ, 1952, էջ 85:

⁵⁵ Ibn al-Šihna, *Al-Durr al-muntahab fi tārīḥ mamlakat Ḥalab*, bi-taḥqīq ‘Abd Allāh Muḥammad Darwīš, Dār al-kitāb al-‘arabī, Դամասկոս, 1984, էջ 192: Իբն Բիբին նոյնպէս գրում է Մարաշի վրայ աղաջ-էրիների յաճախակի յարձակումների մասին, որոնք ըստ նրա՝ «ճանապարհներ եւ կարաւաններ էին կտրում, հրոսում Ռումի երկրի, Ասորիքի եւ հայերի վրայ» (Ibn Bībī, *Muḥtaṣar*, էջ 284. հմմտ.՝ Cahen, *La Turquie*, էջ 240-41:

⁵⁶ Հայերէն ձեռագրերի, էջ 317. հմմտ.՝ Սմբատայ Սպարապետի փարեգիրք, աշխատ.՝ Հ. Սերովբէ Ազըլեան, Վենետիկ, 1956, էջ 234-35 (պատմում է Մունդաս բերդի գրաման հանգամանքների մասին). նաեւ՝ Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ., *հրդ. Ա.*, կազմ.՝ Վ.Ա. Յակոբեան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1951, էջ 82. նոյնի՝ *հրդ. Բ.*, Երեւան, 1956, էջ 71. նաեւ՝ Կ. Մաթեոսեան, Հեթում Պապմիշ Կողիկոսցին եւ նրա ժամանակագրութիւնը, «Մուղնի» հրատ., Երեւան, 2011, էջ 53. նաեւ՝ Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, *ժամանակագրութիւն*, աշխատ.՝ Կ. Մաթեոսեան, «Նայիրի», Երեւան, 2014, էջ 251:

Ամրոցը, հետեւաբար, մէկ տասնամեակից քիչ աւելի եղել է հայկական պետութեան կազմում, մինչեւ որ գրաւուել է մամլուքների կողմից:

Բերդի գրաւման մասին պատմող կարեւորագոյն աղբիւրը կրկին սուլթան Բայբարսի վարքագրութիւնն է: «Քայնութի առման մասին» վերնագրի տակ Իբն Աբդ ալՋահիրը մասնատրապէս գրում է. «Շադաքել էին Քայնութ բերդի բնակչութեան չարագործութիւններն ու թշնամանքը վաճառականների եւ հեփախոյզների նկատմամբ: Այդ մասին գրեցին Սսի տիրոջը, բայց նամակագրութիւնը օգուտ չբերեց: Հայերը սարակուքներ էին հագնում եւ քարաւաններ կտրում: [Ուստի սուլթանը] էմիր Հուսամ ալԴին ալԱյնթաբիին՝ Հալէպի զօրապետին, ուղարկեց Քայնութի վրայ: Վերջինս [այնտեղ] հասաւ [հիջրայի 672] Մուհարրամ ամսի 3ին (1273 Յուլիսի 20) եւ գրաւեց բերդի մերձակայքը: Հայերը մտան միջնաբերդը, եւ մուսուլմանները նրանց դէմ կռիւ տուեցին: Նրանք գրաւեցին միջնաբերդը, սպանեցին տղամարդկանց, կանանց գերի վերցրեցին: Զօրքը յարձակումներ գործեց Տարսուսի կողմերի վրայ՝ կողոպտելով եւ գերեվարելով»⁵⁷:

Ուշադրութեան է արժանի մամլուքեան զօրքի՝ «Տարսուսի կողմերի» վրայ արշաւելու վերաբերեալ Իբն Աբդ ալՋահիրի հաղորդումը, որը ժամանակակից եւ յետագայ սերնդի պատմիչները նոյնութեամբ փոխառել են: Սակայն, մուսուլմանական զօրքի Տարսուն հասնելը դոյզն-ինչ անհաւանական է աշխարհագրական տեսանկիւնից: Մարիուս Կանարը հետեւապէս ենթադրել է, որ արաբ պատմիչը հաւանաբար նկատի է ունեցել Եփրատի եւ Ակ Սուի միախառնման տեղում գտնուող «Թորոս»ը, այլ ոչ թէ «Տարսուս»ը: Ռ. Ամիտայը համաձայնել է Կանարի կարծիքին⁵⁸:

Բայբարսը չի սահմանափակում Քայնութը. յաջորդ տարում արդէն Հալէպի զօրքը՝ էմիր Հուսամ ալԴին ալԱյնթաբիի հրամանատարութեամբ արշաւում է Մարաշ: «Նրանք մեծ քանակութեամբ աւար վերցրին,- գրում է նա,- քանդելով հանեցին Մարաշի արուարձանի դարպասները: Ռաբիա իբն ալՏահիր իբն Ղաննամը խեղդուեց այնտեղ գերանցման ժամանակ»⁵⁹:

⁵⁷ Ibn 'Abd al-Zāhir, էջ 417: Իբն ալՖուրաթը եւ նրան հետեւելով ալՄակրիզին սխալմամբ Քայնութի գրաւումը թուագրում են հիջրայի 671ով (Ibn al-Furāt, *Tārīḥ al-duwal wa-l-mulūk*, MS AF122, Österreichische Nationalbibliothek, Վիեննա, fol. 219a եւ al-Maqrīzī, *Kitāb al-sulūk li-ma' rifat duwal al-mulūk*, ց. 1.2, bi-tahqīq Muḥammad Muṣṭafā Ziyāda, Գահիրէ, 1957, էջ 608: Իբն ալՖուրաթը, այնուամէնայնիս, 672ի տակ կրկին մանրամասն անդրադառնում է բերդամրոցի գրաւմանը՝ ակնյայտօրէն սկզբնաղբիւր ունենալով Իբն Աբդ ալՋահիրի պատումը. հմմտ.՝ Canard, էջ 237-38; R. Amitai-Preiss, *Mongols and Mamluks: The Mamluk-Īlkhānīd War, 1260-1281*, Cambridge University Press, Քեմպրիճ, 1995, էջ 131-32. նաեւ՝ Stewart, էջ 50, 78:

⁵⁸ Canard, էջ 238. նաեւ՝ Amitai-Preiss, էջ 132:

⁵⁹ Ibn 'Abd al-Zāhir, էջ 431:

Քայնութի առմանը հեղինակը եւս մի անդրադարձ է կատարում 1274/75ի անցքերի շարադրանքում, երբ բացատրում է Կիլիկիա ուղղումը արշաւանքի շարժառիթները: Նա գրում է. «Սսի տէրը դադարել էր ուղարկել իր վրայ դրուած նուէրները, ինչպէս նաեւ խախտել էր զինադադարի այն պահանջը, ըստ որի նա չէր կարող վերականգնել ոչ մի շինութիւն եւ ոչ էլ բերդ ամրացնել: Նա դադարել էր նաեւ հաւաստի տեղեկութիւններ հաղորդել, որի պարտաւորութիւնը ստանձնել էր համաձայն իր երդման: Բանն այն է, որ հայերը սարակուջ էին հագնում եւ նրանցով վախեցնում կարաւաններին՝ յայտարարելով, թէ իրենք խանի զօքերն են: Վաճառականները յարկապէս մեծ չարչարանքներ էին կրել Քայնութի կողմից, ուստի սուլթանն ուղարկել էր Քայնութն ւաւերելու, ինչպէս որ արդէն յիշատակել ենք: Սրանից Սսի տէրը [շար] նեղսրտեց, ուստի նրան ասուեց. «Դա քո ձեռքի գործի հետեւանքն էր, ական ընդ ական (բնագրում՝ *wāḥida bi-wāḥidat ḡazā*’, իմա՝ «մէկը մէկի է բաժանում»): Սուլթանը [ղետպան] ուղարկեց՝ յայտնելու նրան, որ շարժում է Սսի դէմ: Սսի տէրը [նաեւ] մտերմացնում էր ֆրանկներին թաթարների հետ եւ նուաստացնում մուսուլմաններին նրանց աչքերում: [Օրինակ, մի օր] այնպէս պատահեց, որ Ռումից թուրքմէն առեւտրականներ էին գալիս՝ ձիերով եւ գոմէշներով, եւ Քայնութի բնակիչները նրանց վրայ յարձակուեցին: [Թուրքմէնները] ասել էին, որ այդ ձիերը սուլթանի համար են տանում, բայց [հայերը] նրանց սպանել էին»⁶⁰:

Մամլուքեան շրջանի միւս պատմագիրները, ի տարբերութիւն Իբն Աբդ ալԶահիրի, շատ անցողակի են անդրադառնում Քայնութի առմանը: Բայբարս ալՄանսուրին (մահ. 1325), Շաֆի Իբն Ալին (մահ. 1330), Բադր ալԴին Բաքթաշ ալՖախրին (մահ. 1344), Կիրտայ ալԻզզի ալԽազինդարին (ԺԴ. դար) ամբողջ գրամանը մէկ-երկու նախադասութիւն են յատկացրել⁶¹: Նրանցից Շաֆի Իբն Ալին, ով Մուսի ալԴինի զարմիկն էր եւ

⁶⁰ Նոյն, էջ 432: Իզզ ալԴին Իբն Շադդադն այս արշաւանքի մասին գրում է. «[Հիշրայի վեց հարիւր] եօթանասուններէ թուականին մեր տէր սուլթանը մտադրուեց արշաւել Սսի երկիր: Դրա պատճառն այն էր, որ Հեթումը մահացել էր եւ նրանից յետոյ գահին նստել էր որդին՝ Լեւոնը: Սա սկսեց փչացնել ամեն, ինչ եղել էր իր հօր եւ սուլթանի միջեւ, քանզի նամակագրում էր թաթարների հետ եւ կտրում Ռումից եկող քարաւանները՝ իրացնելով նրանց ապրանքները եւ տէրերին կոտորելով» (‘Izz al-Dīn Ibn Šaddād, *Al-A‘lāq al-ḥaṭīra fī ḍikr umarā’ al-Šām wa-l-Ğazīra*, ց. 1.2, bi-tahqīq Yaḥyā Zakarīyā ‘Abbāra, Դամասկոս, 1991, էջ 344):

⁶¹ Baybars al-Manṣūrī, *Zubdat al-fikra fī tāriḥ al-ḥiğra*, bi-tahqīq Dunāld Rīṭšārdz (D.S. Richards), Պերլին-Պէյրութ, 1998, էջ 139-40. նաեւ՝ Badr al-Dīn Bektāš al-Fāḥirī, *Tāriḥ al-Fāḥirī*, bi-tahqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmurī, Al-Maktaba al-‘Aşriyya, Սայտա-Պէյրութ, 2008, էջ 106. նաեւ՝ Qirṭāy al-‘Izzī al-Ḥazīndārī, *Tāriḥ mağmū’ al-nawādir mimma ḡarā lil-awā’il wa-l-awāḥir*, bi-tahqīq Hürst Hayn wa-Muḥammad al-Ḥuğayrī, Պէյրութ, 2005 (Klaus Schwarz Verlag, Պերլին, 2005), էջ 158:

նոյնպէս սուլթանական դիւանատան աշխատակից, իր *Al-Manāqib al-sirriyya* երկում, որը *Al-Rawḍ al-zāhir* երկի համառոտագրութիւնն է, գրում է. «Այս փարի սուլթանը հալէպեան զօրքերից մի զօրախումբ ուղարկեց Քայնուք, որ ալՀադասս ալՀամրան է եւ որը ալՄոլթանաբքին յիշարակել է իր բէյթերում: [Պապրճառն այն էր, որ] մեծացել էր նրա (հայոց արքայի – Գ.Դ.) եւ հայերի ամբարտաւանութիւնը, երբ թաթարների հագուստներ էին հագնում եւ կողոպտում վաճառականներին: Ասպարակեցին այն, կռուեցին այնպեղ եղածների հետ, գերեվարեցին, կոտորած ու թալան կազմակերպեցին հայոց երկրում»⁶²: ԱլՆուվայրին (մահ. 1333) եւ Իբն ալՖուրաթը անմիջական աղբիւր են ունեցել Իբն Աբդ ալԶահիրին եւ աննշան տարբերութիւններով ներկայացնում են նրա պատումը⁶³:

Վերոնկարագրեալ իրադարձութիւնների հետ կարելի է զուգահեռել ասորի յակոբիկների մաֆրիան Բար Հերբէոսի այն հաղորդումը, ըստ որի 1273ի ամռանը Այնթաբից եւ ալԲիրայից՝ լեռների կողմից, աւազակախմբեր են եկել *Կլաւդիա*՝ մեծաքանակ գերիներ տանելով: Կլաւդիան Սամոսատի եւ Մալաթիայի միջեւ գտնուող հին բերդ էր, որտեղ հաւանաբար մուսուլման ասպատակիչները որոշել են արշաւել Քայնուքի գրաւումից յետոյ՝ էլ անելի շատ աւար եւ գերիներ ձեռք բերելու նպատակով: Ըստ պատմիչի՝ մուսուլմանները խուսափել են գիշերել այնտեղ եւ հապշտապ հեռացել, քանի որ վախենում էին մոնղոլական զօրքերի կողմից բռնութեւնը⁶⁴:

Ահա այսպիսի ճակատագիր ունեցան բերդն ու նրա հայկական բնակչութիւնը: Բայց արդեօ՞ք սա բերդի պատմութեան վերջին փակուած էջն էր: Յիշեալ Իբն Աբդ ալԶահիրի վկայութեամբ՝ 1276ին բերդով անցել է եւ ալՌուհայդաբ լեռան վրա ճամբար է խփել անձամբ սուլթան Բայբարսը (ինչպէս եւ ինքը): Սուլթանութեան զօրքերը, Ակչա կոչուող կապանով Ալբիստանի դաշտավայր իջնելով, մտել են Ռում⁶⁵: ԱլԿալկաշանդին (մահ.

⁶² Šāfi' ibn 'Alī, *Ḥusn al-manāqib al-sirriyya al-muntaz'a min al-sīra al-zāhiriyya*, bi-tahqīq 'Abd al-'Azīz ibn 'Abd Allāh al-Ḥuwaytīr, Ռիւստ, 1989, էջ 312:

⁶³ Al-Nuwayrī, *Nihāyat al-arab fī funūn al-adab*, ց. 30, Dār al-Kutub al-'Ilmiyya, Պէյրութ, 2004, էջ 215. նաեւ՝ Ibn al-Furāt, *Tārīḥ al-duwal wa-l-mulūk*, ց. 7, bi-tahqīq Qusṭantīn Zurayq, Պէյրութ, 1942, էջ 1. նաեւ՝ al-'Aynī, *ʿIqd al-ğumān fī tārīḥ ahl al-zamān*, ց. 2, bi-tahqīq Muḥammad Muḥammad Amīn, al-Hay' a al-miṣriyya al-'āma li-l-kitāb, Գահիրէ, էջ 118-19:

⁶⁴ Bar Hebraeus, էջ 450:

⁶⁵ Ibn al-Muğayzil, *Ḍayl Mufarriğ al-kurūb fī aḥbār Banī Ayyūb*, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, al-Maktaba al-'Aşriyya, Սայտա-Պէյրութ, 2004, էջ 84. նաեւ՝ 'Izz al-Dīn Ibn Šaddād, *Tārīḥ al-Malik al-zāhir*, bi-tahqīq Aḥmad Ḥuṭayt (Die Geschichte des Sultans Baibars von 'Izz ad-dīn Muḥammad b. 'Alī b. Ibrāhīm b. Šaddād (st. 684/1285), Franz Steiner Verlag, Վիւրբադէն, 1983), էջ 171. նաեւ՝ Al-Yūnīnī, *Ḍayl Mirāt al-zamān*, ց. 3, Maṭba'at Dā'irat al-Ma'ārif al-'Uṭmāniyya, Հայտարապատ, էջ 176. նաեւ՝ Šāfi' ibn 'Alī, *Al-Faḍl al-Ma' tūr min sirat al-sultān*

1418) իր *ṣubḥ al-a' šā'* (Կոյրի լուսաբացը) երկում պահպանել է Իբն Աբդ ալՋահիրի ձեռքով սուլթանից վեզիր ալՄահիր Բահա' ալԴին իբն Հան-նային գրուած մի նամակ: Նրանում ալՄալիք ալՋահիրը մանրամասներ է պատմում իր՝ Ռում կատարած արշաւանքից եւ հաղորդում Կեսարիայի գրաւման անտիսը: Սուլթանի նամակը պարունակում է ալՀադասի մասին նոյն այն հատուածը, որ Մուսի ալԴինը ներառել է սուլթանի վարքագրութեան մէջ, եւ որն արդէն թարգմանաբար ներկայացրել ենք վերելում⁶⁶:

Ժամանակակից միւս հեղինակներից Իզզ ալԴին իբն Շադդադը⁶⁷ (մահ. 1285) գրեթէ նոյնութեամբ կրկնում է Իբն ալԱդիմի վերը բերուած հաղորդումը, իսկ Իբն ալՇիհնան (մահ. 1485) հետեւել է վերջինիս⁶⁸: Աբու ալՖիդան (մահ. 1331), ալՀադասի մասին խօսելիս մէջբերում է Իբն Հաուկալի երկից՝ որպէս վաղուց մոռացուած մի բնակավայրի⁶⁹: ԱլԴիմաշկին (մահ. 1327) նոյնպէս իր *Nuḥbat al-dahr* աշխատութեան մէջ բերդի մասին նախորդների պատմածին ոչինչ չի յաւելում. « *ալՀադաս ալՀամրա. այն վերաշինել է ալՄահդին եւ կոչել այն ալՄահդիյյա: Հայերն այն Քայթուն (sic) են կոչում* »⁷⁰:

Հակառակ մամլուք հեղինակների պնդումներին՝ բերդամրոցը, թէեւ կտրուեց հայոց թագաւորութիւնից եւ զրկուեց հայ բնակչութիւնից, այնուամէնայնիւ, միանգամից չամայացաւ եւ ուրուական քաղաքի չվերածուեց: Այսպիսով, ճիշտ է՝ մամլուքեան իշխանութիւնները խուսափեցին բերդը բռնակցելուց, բայց ամրոցին նրանց հասցրած վնասն այնքան մեծ էր, որ այն հազիւ թէ որպէս ամրութիւն օգտագործուէր որեւէ երրորդ ուժի կողմից՝ լինէն հայերը, թէ մոնղոլները: Վերջիններս 1281ին Հոմսի ճակատամարտում Աբաղայի եղբայր Մենգու-Թեմուրի ընդհանուր հրամանատարութեամբ ծանր պարտութիւն են կրում: Չնայած տարբերութիւններին՝ մամլուքեան աղբիւրների մեծամասնութիւնը վկայում են որ ինքը՝ Մենգու-

al-Malik al-Manṣūr, bi-taḥqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmurī, Al-Maktaba al-‘Aṣriyya, Սայտա-Պէրոյթ, 1998, էջ 81. նաեւ՝ Ibn Taḡrī Birdī, *Al-Nuḡūm al-zāhira fī mulūk Miṣr wa-l-Qāhira*, ց. 7, bi-taḥqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn, Dār al-kutub al-‘ilmiyya, Պէրոյթ, 1992, էջ 150: Արշաւանքի ամենամանրամասն նկարագրութիւնը տուել է Ամիտայը, էջ 157-78:

⁶⁶ Al-Qalqaṣandī, *ṣubḥ al-a' šā' fī ṣinā' at al-inṣā'*, ց. 14, Գահիրէ, 1919, էջ 143:

⁶⁷ ‘Izz al-Dīn Ibn Šaddād, *Al-A‘lāq al-ḥaṭīra*, էջ 173:

⁶⁸ Ibn al-Šiḥna, *Al-Durr almuntaḥab fī tāriḥ mamlakat Ḥalab*, bi-taḥqīq ‘Abd Allāh Muḥammad Darwīš, Dār al-kitāb al-‘arabī, Դամասկոս, 1984, էջ 193:

⁶⁹ Abū al-Fidā’, *Taqwīm al-buldān (Géographie d’Aboulféda)*, ed. M. Reinaud et W. Mac Guckin de Slane, Փարիզ, 1840), էջ 263:

⁷⁰ Al-Dimašqī, *Nuḥbat al-dahr fī ‘ağā’ib al-barr wa-l-baḥr* (Cosmographie de Chems-ed-Din Abou Abdallah Mohammed ed-Dimichqui, ed. M. A. F. Mehren, Սանկտ Պետերբուրգ, 1866), էջ 214:

Թեմուրը, ծանր վիրատուրով է մարտի ժամանակ եւ զոհուել⁷¹: Բայց ժամանակակից պատմիչների մի խումբ՝ մասնատրապէս ակտունինն եւ ակթիզալին, գրում են, որ 1281 Սեպտեմբերին, երբ սուլթանը դեռ գտնուում էր Դամասկոսում, նրա մօտ են բերում գերեվարուած Մենգու-Թեմուրին: Ըստ այս հեղինակների Հուլաղուի եղբօրը բռնել էին սուլթանի հետախոյզները Քայնուքից⁷²:

Ինչպէս երեւում է, Քայնուքը դեռ որոշ ժամանակ՝ առնուազն մինչ ԺԴ դարի 30ականները պահպանել է իր գոյութիւնը որպէս քրիստոնէաբնակ բնակատեղի: Այդ ժամանակահատուածում քաղաքով անցել է մաղրիբցի յայտնի ճանապարհորդ Իբն Բատտուտան (մահ. 1368/69): Իր ճանապարհորդութիւնների յուշագրութիւնները պարունակող երկում՝ *Tuhfat al-nuḍḍār fī ḡarāʾib al-amṣār wa-ʾaḡāʾib al-asfār* (Նուէր երկրների հրաշալիքների եւ ուղեգնացութեան զարմանալիքների մասին մրահայողներին) վերնագրով: Նա քաղաքի մասին գրում է. «Փոքր քաղաք է, որպէղ անհաւասար յոյներ են բնակում՝ մուսուլմանների հովանու տակ (*tahta ḍimmat al-muslimīn*): Այնպէղ ընդամէնը մուսուլմաններին պարկանող մի տուն կար, որոնք կառավարիչ էին նրանց վրաէ: Այն սուլթան Օրխան-բէքի երկրի մաս է: Ապաստանեցինք մի ծեր անհաւասար կնոջ տանը. ձեան եւ ձմռան ժամանակ էր: Նա մեզ լաւ վերաբերուեց, եւ մենք նրա մօտ գիշերեցինք: Այս քաղաքում ծառեր չկային եւ ոչ էլ խաղողի այգիներ: Միակ բանը, որ այսպէղ մշակում էր քրքումն էր: Այդ պատաւը մեզ շատ քրքում բերեց՝ կարծելով, թէ մենք վաճառականներ ենք եւ կը գնենք իրենից»⁷³: Այսպէս, նախորդ դարի հեղինակների երկերում որպէս բարգաւաճ, ծառաշատ բնակավայր նկարագրուող ալՀադասը ԺԴ դարի ականատեսը բնութագրում է որպէս անշունչ ու անհրապոյր մի գիւղակ: Արաբական մատենագրութեան մէջ պահպանուած յետագայ յիշատակութիւններում Քայնուքն արդէն պարզապէս որպէս կապանի անուանում, եւ ոչ թե բնակավայրի:

Այսպէս, արաբ պատմիչները 1417 Յուլիսին տեղի ունեցած եւ Կիլիկիոյ հայութեանը վերաբերող մի ուշագրաւ դէպք են պատմում, որը թեթեւակի առնչում արաբական մատենագրութեան մէջ նաեւ Քայնուք տեղանուան հերթական յիշատակութեան հետ: Այդ թուականին մամլութեան սուլթան Շայխ ալՄուայյադ ալՄահմուդին (իշխ. 1412-21) Փոքր Ասիայում դաժան մարտեր էր մղում թուրքմէն կարամանեան հորդանների դէմ: ԱլՄակրիզին (մահ. 1442) եւ նրան հետեւելով Իբն Թաղրի Բիրդին (մահ. 1470) գրում

⁷¹ Այս մասին մանրամասն՝ աղբիւրների յղումներով հանդերձ՝ Amitai, էջ 197-98:

⁷² Al-Yūnīnī, ց. 4, էջ 90. նաեւ՝ al-Birzālī, *Al-Muqtafī li-tārīḥ al-šayḥ Šihāb al-Dīn Abī Šāma al-maʾrūf bi-tārīḥ al-Birzālī*, ց. 1, bi-tahqīq ʿUmar ʿAbd al-Salām Tadmūrī, al-Maṭbaʿa al-ʿAṣriyya, Սայտա-Պէյրութ, 2006, էջ 513:

⁷³ *Riḥlat Ibn Baṭṭūṭa al-musammāt Tuhfat al-nuḍḍār fī ḡarāʾib al-amṣār wa-ʾaḡāʾib al-asfār*, bi-tahqīq ʿAbd al-Hādī al-Tāzī, ց. 2, Akādimiyya al-Mamlaka al-Maḡribiyya, Ռապատ, 1997, էջ 201:

են, որ երբ սուլթանը գտնուում էր Ալբիստանում, նրան է հասնում Հալէպի կառավարիչ Կաջկար Կարդամիի նամակը, որում յայտնում էր, որ երբ ինքը իջեանել է Բաղրասում, «իր մօտ են եկել Սսի հայոց խալիֆան (իմա՝ հայոց կաթողիկոսը)՝ Քրիքուն անունով (Գրիգոր⁷⁴ - Գ.Դ.)» եւ հայոց մեծամեծերը՝ ձեռքներին Սսի եւ Նաւարզայի (Անաւարզայի կամ Այն Ջարբայի – Գ.Դ.) բերդերի բանալիները։ Նա նրանց [սուլթանի մօտ] ուղարկեց. ժամանեցին բանալիներով հանդերձ։ Սուլթանը [Սսի] բերդի կառավարիչ նշանակեց Շէյխ Ահմադին՝ Հալէպի տասնապետներից մէկին, պապոռոյ հանդերձներ հազգրեց նրան եւ հայերին եւ վերադարձրեց յիշեալ բերդ»⁷⁵։ Մուսուլման պատմիչները շարունակում են, որ սուլթանն այնուհետեւ իջեանել է «Քունիք տեղանքում» (sic, ակնյայտ գրչագրական սխալ է - Գ.Դ.)՝ արշաւանքի յետագայ ընթացքը ղեկավարելու նպատակով⁷⁶։

1436ին մամլուքեան սուլթան Բարսբայի (կառ. 1422-38) հրամանով Հալէպի եւ Համայի զօրքերն արշաւել են Ջուկադղիւրների ամիրայութեան դէմ։ Արաբագիր հեղինակների վկայութեամբ՝ մամլուքեան բանակը փորձել է Ալբիստանի դաշտավայր անցնել «Քայնութի կապանով», բայց չի կարողացել առատ ձեան պատճառով՝ ստիպուած լինելով այլ ճանապարհ ընտրել⁷⁷։

Այս հաղորդումը *ալՀադաս-Քայնութի* ժամանակագրական առումով մեզ յայտնի վերջին յիշատակութիւնն է միջնադարեան արաբական պատմական գրականութեան մէջ։ Ընդսմին, ենթադրելի է, որ իր ժամանակի ռազմավարական առումով ամենաամուր բերդաքաղաքներից մէկը ԺԴ դարի վերջից ԺԵ դարի սկզբից ւրուած է եղել։ Ժամանակի փորձութեանը չեն դիմացել անգամ նրա ամերակները։ Այդ է պատճառը, որ մինչ օրս հնագիտական պեղումներով այդպէս էլ չի ճշտուել բերդի յստակ տեղադրութիւնը, չնայած, նման փորձեր ձեռնարկուել են։ Գիտական գրականութեան մէջ երկար ժամանակ գերիշխող է եղել այն տեսակէտը, որ բերդը պէտք տեղադրել լճի հիւսիսային կողմում՝ Ինեքլի (*Inekli*) բնակավայրի մերձակայքում⁷⁸։ Սրան հակառակ՝ Ռ. Հարթմանը 1950ին բերդը

⁷⁴ Սսի Գրիգոր Ը. Խանձողատ կաթողիկոսն է (1411-18)։

⁷⁵ Al-Maqrīzī, ց. 4.1, էջ 404. Նաեւ՝ Ibn Tagrī Birdī, ց. 13, էջ 199-200. Նաեւ՝ Ibn al-Sayrafī, *Nuzhat al-nufūs wa-l-abdān fī tawārīḥ al-zamān*, ց. 3, bi-tahqīq Ḥasan Ḥabašī, 1973, էջ 389։ Այս հաղորդումն արժէքաւոր տեղեկութիւն է տալիս արդէն չորս տասնամեակից աւելի թագաւորութիւնից զրկուած կիլիկիահայութեան քաղաքական կացութեան մասին։ Այնուհանդերձ, դրա մանրամասն քննարկումը դուրս է սոյն հետազոտութեան ծիրից, ուստի կը թողնենք մէկ այլ ուսումնասիրութեան։

⁷⁶ Տե՛ս՝ նախորդ ծանօթագրութիւնը։

⁷⁷ Al-Maqrīzī, ց. 4.2, էջ 979. Նաեւ՝ Ibn Tagrī Birdī, ց. 14, էջ 261. Նաեւ՝ Ibn al-Sayrafī, *Nuzhat al-nufūs*, ց. 3, 1973, էջ 352։

⁷⁸ Le Strange, էջ 122։

տեղադրել է Հադասի լճից հարավ՝ Սերայ-Քէոյ կոչուող տեղանքում իր յայտնաբերած աւերակների մօտ⁷⁹։ Թ. Սինքլերը նույնպէս բերդամրոցը տեղադրել է Բաշփինար (Բաշփունար) գիւղի մերձակայքում՝ Սերայ-Քէոյի մօտ⁸⁰։ Ծովք բերդի հետքերը որոնելիս այս կողմերով նախորդ դարի 60ականներին անձամբ ճամփորդել է Յարութին Տէր Ղազարեանը՝ լինելով նաեւ *Սարայ* կամ *Գոյնուք* կոչուած քրդական գիւղում, որը ըստ նրա պատմական *ալՀադաս-Քայնուքն* է⁸¹։ Ինչեւէ, *ալՀադաս-Քայնուքից* ոչինչ չի մնացել, թերեւս միայն միջնադարեան սկզբնաղբիւրների վերոբերեալ հաղորդումները՝ որպէս հզօր բերդամրոցի եւ ծաղկուն քաղաքի երբեմնի փառքի վկայութիւններ։

CILICIAN ARMENIAN FORTRESSES AND CITIES ACCORDING TO MUSLIM SOURCES II- KAYNŪK

(Summary)

GAGIK DANIELYAN (gagidaniel@gmail.com)

After publishing a study on the Cilician fortress of Canamella/Caramella/Caramela (in Latin sources) and *al-Tinī/ Hişn al-Tināt/Tināt* in Arabic sources, the author studies the history of another Cilician Armenian fortress, *Kaynuk/ Hişn al- Hadaṭ/al- Hadaṭ al-hamrā*.

Interestingly both these fortresses are not mentioned in Armenian sources, particularly at the time when both were in the territories of Cilician Armenia. The study assesses the strategic location the fortress had for some four centuries and the role it played along with other border fortresses that overlooked the Byzantine-Caliphate boundary. Basing his research on information provided by Arab and non-Armenian historians and sources, the author reconstructs the history of the fortress and the battles fought for its control as well as its eventual transformation from a lively city fortress into a ruined village, although its exact location is still not known.

⁷⁹ R. Hartmann, *Istanbuler Forschungen*, XVII, 1950, էջ 40-50: *ալՀադասի տեղադրութեանը նուիրուած այս յօդուածը, չնայած մեր ջանքերին, անհասանելի է մնացել մեզ համար։ Ծանօթագրութիւնը տրուած է ըստ՝ S. Ory, "Al-Hadath", in The Encyclopaedia of Islam, vol. III, Second Edition, E.J. Brill, Լէյտէն, 1991, էջ 20:*

⁸⁰ Sinclair, էջ 79:

⁸¹ Յ. Տէր Ղազարեան, *Հայկական Կիլիկիա. Տեղագրութիւն*, տպ. Կաթող. հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1966, էջ 102-3, 107-8: